

ՎԵՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 7 ռուբլ, կես տարվանը 4 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և

Արամյանեանի խանութում

Օտարադպրացիք գիտում են ուղղակի

Тифлис. Редакция „Мелк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2

(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

“ՄԵԼԿ” լրագրի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ
խնդրում է այն բաժանորդ-
ներին, որոնք այս ամբողջ տարվայ կամ
կես տարվայ բաժանորդական գինը լեզվին չեն
տուել խմբագրութեանը, շտապեն լրացնել
իրանց բաժանորդագրին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր օրերդական դպրոցը, — Ն երբ ին տ ե-
ս ու թ իւ ռ ն: Թիֆլիսի մասնաժողովի հաշիւը:
Նամակ Թէլուից: Նամակ Շուշուից: Ներքին
լուրեր: Արտաքին տեսութիւն: Ֆրան-
սիա, Գերմանիա, Սերբիա, Աւստրո-Ունգարիա:
— Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց: — Բա-
նասիրական: Երևանի նահանգը և նրա ազ-
գաւանկութիւնը:

ՆՈՐ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Լսում ենք որ Մօսկվայի հա-
րուստ Անանովի ձեռքով թիֆ-
լիսում հիմնվող օրիորդական դը-
պրոցը շուտով բացվելու է: Լսում
ենք որ տեսուչը, ինչպէս և յայտ-
նեցինք անցեալ համարներից մինի
մէջ, արդէն նշանակված է:

Որքան և պակասութիւններ ու-
նենային հայերը, պէտք է խոս-
տովանել որ մեր ազգը մէկ լաւ
յատկութիւն ունի, այն է որ իր
կարողութեան չափ աշխատում է
միշտ և ամեն տեղ ուսումնարան-
ներ հիմնելու: Ճշմարիտ է, բոլոր
կովկասեան ազգերից հայերը միակ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԶԱՆԳԸ ԵՒ ՆՐԱ
ԱԶԳԱՐԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Մեր կրօնիկների թղթակիցներից շատ քիչ
կը գտնէք, որոնք ունենային ճշմարիտ թղթա-
կիցներին հարկաւոր գիտող յատկութիւն-
ներ:

Կեանքը և կեանքի գլխաւոր, ամենահետա-
քրէր երևոյթները մեր թղթակիցների մեծ մասի
գիտողութիւնները անմատչելի են: Երազիկների
թղթակցութիւնների մեծ մասը խօսում են քա-
հանաների, վարդապետների, ուսուցիչների, վար-
ժուհիների, տեսուչների, հոգաբարձուների, — և
առհասարակ եկեղեցու և ուսումնարանի մասին:
Կեանքը իր բազմաժանոց արտայայտութիւն-
ներով չէ հետաքրքրում մեր թղթակիցներին:

Բայց ինչքան, օրինակ, հետաքրքրի է այդ
կեանքը Ներսէսեան նահանգում: Ներսէսեան նա-
հանգը նորինքան բազմաժանոց է իր ազգագրա-
կան կողմից, որքան իր երկրի գերքի, տեղա-
գրական կողմից: Սարօտ երկրի ու տափարակ
երկրի, մէկ տեղ թանգ է ամեն մի տոնաչափ
գետին, իւրաքանչիւր կտոր հող, ինչպէս օրի-
նակ Աբարանում, վարած, ցանած, մշակված է,
— իսկ միւս տեղ ահազին տարածութիւնները
կը տեսնէք ամայի և անմարդաբնակ, որտեղ
ժամանակ առ ժամանակ երևում են թափառա-
կան քուրդերի վրանները:

Ես ման գալով գիւղից գիւղ միջոց ունեցայ

ազգ են որ ունեն բազմաթիւ ու-
սումնարաններ: Մենք չենք խո-
սում այդ ուսումնարանների օրգա-
նական պակասութիւնների վրա,
բայց չենք կարող չը խոստովա-
նել, — և այդ խոստովանումն բո-
լոր օտարազգիները, — որ ամեն
տեղ ուսումնարաններ հիմնելու
ձգտումը մի շատ գովելի ազգային
յատկութիւն է և ապացոյց է մի
ազգի հին քաղաքակրթութեան,
ապացոյց է որ ազգը ունի բարո-
յական և մտաւոր հարուստ ապա-
գայ:

Բայց մեր ուսումնարանների
մեծ մասը միշտ հիմնվում են
առանց հաստատ, հիմնական դը-
րամագլխի. մեզանում նախ և ա-
ռաջ հիմնում են մի ուսումնա-
րան, — և յետոյ սկսում են միջոց-
ներ որոնել հիմնած ուսումնարանը
պահպանելու: Անանովի ուսում-
նարանը ներկայացնում է մեր ազ-
գային կեանքի մէջ մի նոր երե-
ւոյթ: Գեղեցիկ, ընդարձակ շէնու-
թիւնը պատրաստ է, պատրաստ
կան ուսումնարանական պիտոյք-
ները, իրեղենները և գրադարանը,
կայ նշանակված մի որոշ թէև
ոչ շատ մեծ, տարեկան եկամուտ,
որով ուսումնարանը կարող է

ծանօթանալ նոր գաղթած թիւրքահայաւատակ
հայերի և եգիպտացիների հետ: Հայերից չա-
տերը հարուստ գիւղացիներ են երևում, շատերը
նրանցից բերել են իրանց հետ իրանց սայլերը,
եղբրը, կովբը, տան կահ-կարասիքը, չարժա-
կան կաշիքը: Նոքա ասում են որ հնձված հացը
ժամանակ ունեցան թախ կացնել հողի մէջ փոր-
ված մեծ փոսերի մէջ և ծածկել հողով բայց
այժմ կողմնակի ճանապարհով իմացան թէ շատ
տեղ թիւրքաց տէրութիւնը գտել է և բաց է
արել այդ հացի նահապետական ամբարները:
Նոքա վայրերի քուրդերից փախչելով կարողա-
ցան գետնի մէջ թախ կացնել և փողերը, բայց
փողերը հազիւ թէ թիւրքաց կառավարութիւնը
կը գտնէ: Գաղթականները պատմում են որ
նոքա պատերազմից առաջ շատ բարեկամական
յարաբերութիւններ ունէին իրանց հայեան
թուրք և քուրդ գիւղերի հետ, ունէին մեծ հո-
ղեր, ապրում էին հանգիստ իրանց համար, թէև
մեծ հարկեր էլ վճարում էին, և պատերազմը
յայտնվելուն պէս անվարձ պահում և կերակրում
էին իրանց հաշով թիւրքաց զօրքեր մեծ քա-
նակութեամբ, բայց դարձեալ չէին թողնի իրանց
հայրենիքը, չէին փախչի Տէր-Ղուկասով գետնե-
րակի զօրքի հետ, եթէ նրանց կողմերը չը գա-
լին մինչև այդ ժամանակ Ալաշկերտի և Բայա-
զէտի կողմերում անծանօթ, չը տեսնված վայ-
րերի, կատաղի քուրդերը վաճի և Մուշի
սարերից: Այդ վայրերից, թիւրքաց զօրքի
այդ դաշնակիցները, որտեղ անցնում էին ան-
խնայ կտորում, սպանում էին բոլոր բնակիչ-
ներին, չը զանազանելով քրիստոնեաներին մահ-
մետականներից և եղիպեաններից, բռնաբարում էին
կանանց և աղջիկներին, այրում, ոչնչացնում
էին գիւղերը... Այդ քուրդերից փախան ոչ թէ

պահպանվել և ուժիկ նշանակել
տեսչին, վարժուհուն և վարժա-
պետներին:

Մեզանում, առհասարակ, ու-
սումնարանները հիմնվում են զը-
րօշներով, առանց որ և է հաս-
տատ նիւթական միջոցի, և պահ-
պանվում են անհաստատ բարե-
գործական միջոցներով, սորանից
կամ նորանից նուիրատուութիւն-
ներ ժողովելով: Այդ պատճառով
մեր ուսումնարանները թէև բազ-
մաթիւ են, բայց առհասարակ եր-
կար կեանք չունեն. որքան շուտ
ծնվում են նոքա, այնքան էլ շուտ
անհետանում:

Անանովի հիմնված օրիորդա-
կան դպրոցը հաստատ դրամական
միջոցներ ունելով, խոստանում է
երկար և հաստատ կեանք ունե-
նալ:

Յոյս ունենանք որ այդ դպրոցը
ազատ կը լինի այն խոշոր պա-
կասութեանից, որ յատուկ է մեր
բոլոր հիմնարկութիւններին, որոնք
իրանց գոյութեամբ մի որ և է
բարեբարին են պարտական:
Մեզանում բարերարը առհասա-
րակ իրան իրաւունք է համարում
իր բարերարութիւնը ազգին զգալ
տալու համար, — թէև ինքն էլ

ոչինչ չը հասկանար, այս ինչ կամ
այն ինչ գործի մէջ բոլորովին
մասնագետ էլ չը լինէր, — ան-
պատճառ անձամբ խառնվել, կամ
իր բոլոր ազգականներին խառնել
գործի մէջ և վերջապէս գործն էլ
խանգարել... «Այս բարերար եմ,
ասում է հայը, ուրեմն ինչպէս
կուղենամ, այնպէս էլ կանեմ...»
Եւ մեծ մասամբ այնքան բարձր է
գնահատում իր արած բարերա-
րութիւնը որ, իրան իրաւունք է
համարում քանզի էլ իր ստեղ-
ծածը...

Դա հայի յատկութիւն է: Իսկ
մենք կարծում ենք որ եթէ մի
մարդ մի հասարակական գործին
ձեռք տուեց, ստեղծեց այդ գործը,
մինչև անգամ եթէ այդ գործի
վրա իր վերջին կօպէկը զոհած լի-
նէր, — այդ ստեղծած գործը այլ
ևս նրա անձնական գործ չէ, նա
դառնում է հասարակական գործ
և ինքն բարերարն էլ կրկին և
կրկին խառնվելով գործի մէջ կա-
րող է փչացնել, քանզի իր ստեղ-
ծածը:

Այդ կողմից պ. Անանովի յա-
րաբերութիւնը դէպի իր հիմնված
ուսումնարանը կարելի է ճշմարիտ
գովել անուանել: Նա երևում է

կան թէև մասամբ աղաւաղված սկզբունքների:
Գուրդ եղիպեանը, ինչպէս գիտականներից չա-
տերը կարծում են, հին մեղացիներ են, իսկ ծանօ-
թացայ նրանց հոգեւոր գլխի, չէլ լի հետ, որին
պատահելով Սուրբաբուի դաւաճի հայ գիւղերից
մինի մէջ, խնդրեց բացատրել ինձ իրանց կրօնի
էութիւնը, և անա մօտաւորապէս ինչ բացատր-
ութիւն ստացայ նրանից: «Աստուած երբ
բարկացել էր չար ոգու, սատանայի վրա, դըր-
կել էր նրան իր պաշտօնից: Այդ չար ոգին,
չար հրեշտակը, այդպէս հալածված, իր պաշ-
տօնից զրկված, մի ժամանակ աստուծու օգ-
նական և բարի հոգի, բարի հրէշտակ է եղել:
բայց յանցանք գործելով, ենթարկվել է աս-
տուծաւոր կր յերէ նրան, նորից կը տայ նրան
երկնքում մի նշանաւոր պաշտօն, ուրեմն մարդիկ
պէտք է աշխատեն այդ ժամանակաւոր պատ-
ժաճի հետ որքան կարելի է լաւ յարաբերու-
թիւններ պահպանել եթէ ոչ կրկին ոյժ ստանա-
լով, նա կարող է վրէժնալիք լինել մարդիկնե-
րից:» — Այդ պատճառով եղիպեանը պաշտում
են և բարի ոգուն, և չար հրէշտակին՝ աստու-
ծուն և սատանային: Ինչպէս տեսնում էք այդ
վարդապետութիւնը մեծ նմանութիւն ունի հին
դրադաշտական կրօնի հետ, որ նոյնպէս ընդու-
նում էր երկու աստուծային, ստեղծագործական
ոյժեր՝ բարի աստուած և չար աստուած, որոնց
երկուսին էլ համարում էր հաւասար իշխանու-
թիւն ունեցող, միմեանց մէջ մրցող...

Եղիպեանը, ինչպէս ասացի, բոլորն էլ հայե-
րէն են խօսում և հայերէն նման հագուստներ
ունեն: Բայց նոքա խաչարարներ են և ոչ թէ
երկրագործներ, բնակվում են վրաններ մէջ և
թափառում են մէկ տեղից միւս տեղ: Նրանց

որ անկեղծ կերպով ցանկանում է իր ուսումնարանի աջողութիւնը՝ նա հիմնեց ուսումնարանը, և ինքն բոլորովին է խառնվում նրա բացվելու և կառավարելու գործի մէջ, այլ յանձնեց ուսումնարանի բացման գլուխ բերելը և կառավարութիւնը ուրիշ անձինքներին:

Դա ոչ թէ ամօթ բան է, բայց գովելն է և ապացոյց է բարձր զարգացման, եթէ մի մարդ խոստովանվում է որ ինքն մանկավարժ է և մանկավարժութեան մէջ բան է հասկանում: Մի՞թէ հարուստ լինելով՝ մարդը ամեն բան պէտք է իմանայ: Բայց վեր առէք մեր հարուստ մարդիկների մեծ մասը. նոքա կարծում են որ գրպանում փող ունելով, ամեն բան գիտեն՝ նա բժշկից լաւ բժշկութիւն գիտէ, իրաւաբանից լաւ իրաւաբանութիւն է հասկանում, մանկավարժից գերազանց մանկավարժ է, և այլն:

Յոյս ունենանք որ և նոքա, որոնց յանձնել է պ. Մանսով իր ուսումնարանի պոլիտիկան, կը հետեւեն նրա օրինակին համեստութեան կողմից: Չը պէտք է մոռանալ որ ինչպէս մի յայտնված փիլիսոփայական միտք հէնց որ յայտնվեցաւ՝ դարձաւ ընդհանուր սեփականութիւն, այնպէս էլ մի հիմնարկութիւն, — թէև բարեգործական սկզբունքի վրա հիմնված լինէր նա, — գոյութիւն ստանալուն պէս, դադարում է անձնական սեփականութիւն լինելուց, այլ դառնում է հասարակաց սե-

փականութիւն, որի յարատեւ գոյութեան համար անհրաժեշտ է հրաժարվել անձնական շահերից և աչքի առջև ունենալ միմիայն ընդհանուր հասարակական շահերը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԿԻԱՅԻՑ ԳԱՂԹԱՍ ԲԵՐՍՈՆԵԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱԴՈՂԱՅԻ ՀԱՇՎԻՔԻ ՄԻՆԶԵՐԻ 1 ՀՈՍՏԵՄԲԵՐԻ 1877 ԹԻՒ

Հէնց որ ստացվեցաւ թիֆլիսում Գարսի և Բայազետի սանձաւորների մի քանի տեղերի հայոց ազգաբնակչութեան տառապանքների լուրը, որ և ստիպեց թիֆլիսացի ահաբեկազուխ երկիրների քրիստոնեաներին որոնել պաշտպանութիւն և ապահովութիւն Անդրկովկասի սահմաններում: Թիֆլիս քաղաքի բնակիչները, զրոյված ցաւակցութեան զգացմունքից դէպի իրանց համադաւանները և ցեղակիցները, մասնաւոր սկզբնաւորութեամբ բաց արին ստորագրութիւն մեր սահմանները անցած թիւրքիսպաշտակ քրիստոնեայ գաղթականների համար նուիրատուութիւնները հաւաքելու նպատակով: Նուիրատուութեան գործին մի հաստատ կազմակերպութիւն տալու և գաղթականների օժանդակութիւնը աւելի նպատակաշարժար անելու համար, պ. պ. նուիրատուները կամեցան կազմել իրանց միջեց մի առանձին մասնաժողով, որին պիտի յանձնէին թէ նուիրատուութիւնները հաւաքելու և թէ մասնաժողովի գանձարան մշտնջուր փողերի ծախսելու հոգսերը: Օգոստոսի 10-ին ներկայ 1877 թվի պ. պ. նուիրատուները, գումարելով թիֆլիսի ժողովի (Հայոց Կլուբի) ամսարանցում, ընտրեցին իրանց միջեց տասն անդամներից և չորս կանգնողներից բաղկացած մասնաժողով: Ընտրվեցան հետեւեալ անդամները՝ Ա. Ս. Անանով, Յ. Ա. Չիթախով, Գ. Ս. Արծրունի, Պ. Ս. Գամբարով, իշխան Կ. Ա. Բերուսով, Վ. Յ. Սուրբուհով, Յ. Ա. Խաթիսով, Ա. Յ. Ման-

տաշևի, բժշկական Գ. Յ. Գուշարեանց և Լ. Շ. Մելիք-Բեկարով: Իսկ կանգնողները ընտրվեցան՝ Ա. Յ. Յովհաննիսեան, Մ. Գ. Լօմիզէ, Ն. Գ. Փրոսով և Մ. Ս. Դոլուխանով: Օգոստոսի 23-ին կառավարութիւնը հաստատեց թիֆլիսի Մասնաժողովը թիւրքիսպից գաղթած քրիստոնեայ ընտանիքների օգնութեան: Մասնաժողովը հաստատված լինելուն պէս ձեռք տուեց իր պաշտօնակատար անձների ընտրութեանը: Ընտրվեցան՝ նախագահ Ա. Ս. Անանով, գանձապահ Յ. Ա. Չիթախով և քարտուղար Գ. Ս. Արծրունի: Գանձապահի ընտրվելուց յետոյ, Մասնաժողովը իսկոյն յանձնեց նրա պահպանութեանը իր ձեռքում ունեցած բոլոր գումարները և վճռեց՝ ղեկմել թիֆլիսի Առևտրական բանկին, Կօմիտէի փողերի համար ընթացող հաշիւ բաց անելու առաջարկութեամբ:

Աչքի առջև ունելով որ Մասնաժողովի անդամակիցներից մինք, այն է Յ. Ա. Խաթիսով ուղարկվում է տէրութեան հրամանով Նրեանեան նահանգը, գաղթականների գեւտեղման միջոցների մասին, եթէ նոքա կուգինան միայն Ռուսաստանի սահմաններում, իր դատողութիւնները կազմելու և ներկայացնելու համար, Մասնաժողովը շատ յարմար համարեց յանձնել իր անդամակցին ծանօթանալ գաղթականների դրութեան հետ և հարկաւոր եղած ժամանակ շուրջապիտ օգնութիւն հասցնել կարօտեալներին: Այդ նպատակով պ. Խաթիսովին տրվեցաւ Մասնաժողովի փողերից 3000 ռուբլ. միանուագ առ ձեռն գումարը և տրվեցաւ ինստրուկցիա օգնութիւն հասցնելու միջոցների վերաբերութեամբ:

Եւ և նոյն ժամանակ Մասնաժողովը յանձնեց պ. Խաթիսովին ա. Նորին Վեհափառութեան Պատրիարք և Կաթողիկոս ամենայն հայոց Գեորգ IV-ին ուղղված նամակը, ի նրկատի ունելով որ Նորին Վեհափառութիւնը հրամայած է իր իրաւասութեանը ենթարկված հոգևորականութեանը ժողովի նուէրները գաղթած հայերի համար և բ. թուղթ դէպի Նրեանեան մասնաժողով թիւրքիսպից գաղթած հայերի օգնութեան, երկու մասնաժողովներին մէջև էլ գործողութեան միութիւնը և անհրաժեշտ կապերը հաստատելու համար: Պ. Խաթիսով Նրեանեան նահանգը համեմելով տեղեկացրեց մասնաժողովին,

որ գաղթականների մէջ, մանաւանդ մանուկների շրջանում՝ յայտնվեցան զանազան ցաւեր, ամառայն չըբ ժամանակ հոլ և սարսուտ տեղերից Արարատեան դաշտը յանկարծակի տեղափոխվելու պատճառով: Մասնաժողովը անյապաղ վճռեց ուղարկել պ. Խաթիսով անուշիով անհրաժեշտ դեղերը, այն դեղացուցակներով և այն քանակութեամբ որ ցոյց էր տուած Նրեանի քաղաքային բժիշկը: 1) Մի և նոյն ժամանակ համոզվելով պ. Խաթիսովի նամակից, որ գաղթականները հարկաւորութիւն ունեն տաք շրթերի, կօշիկների և ձերմակեղէնի, Մասնաժողովը վճռեց՝ ծախսել 4000 ռուբլից ոչ աւելի՝ յիշեալ նիւթերը գնելու համար և անյապաղ ուղարկել բոլոր առաժը Նրեանեան Կօմիտէին: 2)

Մասնաժողովը գաղթականների դրութեան հետ, Մասնաժողովը այն համոզմունքի հասաւ որ իր ձեռքում ունեցած միջոցները չեն համապատասխանում գաղթականների պահանջներին, որոնք ժամանակաւորապէս վայելում են Նրեանեան նահանգի հայ գիւղական ազգաբնակչութեան հիւրասիրութիւնը: Իր նիւթական միջոցները անձնելու համար, Մասնաժողովը ղեկեց տեղական լրագրութեանը գաղթականների համար ստորագրութիւն բաց անելու խնդրեով և տարածեց չըջարեական նամակներ ստորագրութեան թերթի հետ միասին թէ եւրօպական Ռուսաստանի և թէ Կովկասեան փոխարքայութեան զանազան քաղաքների պատուաւոր անձինքներին, խնդրելով նրանցից մարդասիրաբար մասնակցել նուիրատուութիւնների համաւաքման գործին: Մի և նոյն ժամանակ Մասնաժողովը որոշեց սկսել հաւաքել նուիրատուութիւնները շրթերով, ձերմակեղէնով

1) Գեղերից որոնք պէտք է ուղարկվին՝ անյապաղ ստացվեցաւ անվարձ 54 ռ. և 92 կօպ. գումարի դեղերը և մի և նոյն ժամանակ յիշեալ անձը յանձն առաւ այդ դեղերը Նրեան ուղարկելու ճանապարհի ծախսերը: Պ. պ. Գեղին և Ալվազով դեղագործներից ընդունվեցան դեղեր 30 ռ. և 22 կօպ. գումարի, և մի և նոյն ժամանակ նոքա դեղերի արժէքից 45 պրօցէնտ դիտում արին: Գումարից մի քանի դեղեր ընտրվեցան 13 ռուբլի: Տեղեղով ընտրվեց դեղեր 10 ռուբլի: Հիւանդներին բաժանելու համար ընտրվեցաւ չաքար և թէյ՝ պ. Պանդուկազովից 5 ֆունտ թէյ և 1 պուգ չաքար, Գուրգենովից 1/2 պուգ չաքար, Բարսեւսովից 2 ֆունտ թէյ:

2) Թիֆլիսի մասնաժողովը արդէն ուղարկել է Նրեան գաղթականների մէջ բաժանված լինելու համար 1900 ռուբլի նիւթեր:

տիպի և հագուստի նմանութիւնը հայերի հետ պատճառ եղաւ որ Տէր-Ղուկասովի դօրքը յանձն առնելով նրանց պաշտպանութիւնը, համոզված էր որ նրանք էլ քրիստոնեաներ և հայեր են: Երևանեան նահանգը երբ նուաճվեցաւ ուսումնարանից, ունէր շատ աննշան հայոց ազգաբնակչութիւն, իսկ այժմ ապահովութիւն գտնելով ուսուց տիրապետութեան տակ, բնիկ հայերն էլ բազմացան և բայց ստորանից նահանգը լցվեցաւ: Պարսկաստանից և թիւրքիսպից եկած գաղթականներով, այն ինչ՝ Պարսկաստանի և թիւրքիսպիս անդադար կորցնում են իրանց հայ ազգաբնակչութիւնը: Գաղթականները իրանք վերկայում են որ Ալաշկերտի, Բայազետի և Գարսի կողմերը պատերազմից առաջ էլ գրեթէ հայ չը կար: Ուրեմն շնորհով թիւրքաց տէրութեան ճնշման, հայը Հայաստանում հետգնեալ անշեւտանում է, Հայաստանում հայերը կազմում են ազգաբնակչութեան ամենամանջան մասը: Այդ երեւոյթը ամենալաւ ապացոյց է թէ որքան երջանիկ են հայերը թիւրքիսպիսում: Թող եւրօպայի և մեր թիւրքաւերները գնան Բայազետի, Ալաշկերտի, Գարսի կողմերը, կամ խօսեն գաղթականների հետ, — և կը համոզվեն որ հայերը թիւրքիսպիսում լինով անդադար պակասում են: Դա ամենալաւ ապացոյց է մի ժողովրդի թշուառ դրութեան, երբ նա լինում նուազվում է, անհետանում է, ոչնչանում է: Մեզ ինչ օգուտ որ Կ. Պօլսի հայերը բազմանում են, իրանց համար հարստանում են, մեծ մեծ խօսում են, ունեն իրանց ազգային և կրօնական ժողով իրանց ուսումնարաններ, երբ բուն Հայաստանում չուտով էլ չի լինի ոչ մի հայ: ...

Մէկ բան միայն միտմարական է՝ այն է որ հայ ժողովուրդը շատ պտղաբեր ժողովուրդ է և

հէնց որ ինչ թէ շատ աղանջովայնեւ հային, նա սաստիկ կը բազմանայ: Գաղթած հայերի ընտանիքների աղտոյցը են մեր խօսքը ճշմարտութեան յարաբերակցութեան ընտանիքը բազմացած է եօթ, ութ, ինն, տաս, տասն և մէկ անդամներից: Ուրիշ ազգերի մէջ տուն կամ ծուխ առելով պէտք է հաշիւ միջին լինով իւրաքանչիւր ընտանիքում 5 մարդ, իսկ այդ նոր գաղթածների տան մէջ միջին լինով 8 մարդ պէտք է հաշիւ: Այժմ թողնելով գաղթականներին, կը կանոնայի քանի մի խօսք տեսլ առհասարակ երեւանեան նահանգի խառն ազգաբնակչութեան վրա: Պէտք է մէկ բան տեսլ, որ ինչքան և խառն լինէր երևանեան նահանգի ազգաբնակչութիւնը, բայց բոլորն էլ թուրք, երկր, մալական, դուխօբ, պրիգուս, քուրդ, — ամենքը խօսում են հայերէն:

Հետաքրքիր են շատ այդ բոլոր սեկտաները, աղանջները: Բայց շատերը չեն իմանում թէ պրիգուսն անուանված աղանջի մէջ շատ հայեր կան: Ամենքը գիտեն թէ երևանեան նահանգի հայերի մեծ մասը լուսաւորչականներ են, թէ կան նոյնպէս կաթօլիկ և բողոքական հայեր, բայց շատերը չը գիտեն թէ կան նոյնպէս պրիգուս-հայեր, որոնք իրանք իրանց պրիգուս չեն անուանում, այլ անուանում են առաքելական եկեղեցի: Կո առիթ ունեցալ խօսել հայ-պրիգուսների աղանջի գլխաւորներից միմի հետ: Կո հասարակ արուեստաւոր է, քարտաշ և երեսում է բաւական զարգացած մարդ, և գրագէտ է: Նրանց աղանջի մէջ բոլորն էլ գրագէտ են: Պրիգուսն բառը ծագում է ուսուց պրիգուս (թուրքերէն թուլիլ) բառից: Պրիգուսները հաւաքվում են իրանց եկեղեցում, կարգում են աւետարան (նոքա քահանաներ

չունեն) միմեանց մէջ միմարանում են աւետարանի վրա և վերջը սկսում են թէ կանայք և թէ մարդիկ ամենքը պատու գալ, թուգիտել եկեղեցում, մինչև որ շատերը ուշաթափ են լինում և ընկնում են: Այդ արարողութեամբ նոքա աքսորում են իրանց միջից չար ոգի: Այդ ընդհանուր խառնակութեան ժամանակ պատահում է որ մեմը ընկնում է և հանգչում է և այդ հանգամանքը առիթ տուեց շատերին կարծել և հաւատացնել որ մեմը հանգչելուն պէս պրիգուսները իրանց թող են տալիս միմեանց առհասարակ սեռական յարաբերութիւնները կատարել: Բայց իմ ծանօթ քարտաշ հայ-պրիգուսները կարծում են որ այդ զրպարտութիւն է, որ երբեք պրիգուսներ իրանց չեն թող տալ կատարել եկեղեցում սեռական յարաբերութիւնները: «Գուք ուրեմն ձեզ ուսուց քաւում այժմ, որովհետեւ պրիգուսն էք»՝ հարցրի ես:

— «Այ ես հայ եմ և առաքելական եկեղեցուն եմ պատկանում, պատառնանեց նա: Պրիգուսն մեր աղանջի ուսուց անուն է, իսկ առաքելական հայոց անուն է:»

Ինչ է պրիգուսների աղանջի գլխաւոր խորհուրդը: Ահա ինչպէս բացատրեց ինձ իրանց աղանջը հայ-պրիգուսը: «Մենք ամբողջ քրիստոնեականներն ենք ընդունում ենք միմիայն աւետարանը, իսկ աւետարանից այնքան ենք ընդունում, որքան նա յարաբերութիւն ունի մարդու բարոյական և հասարակական կողմերի զարգացման հետ: Մենք աներևոյթ մի էակն, Աստուծոյն ի հարկէ հաւատում ենք, բայց աւետարանի մէջ աստուածային զօրութիւն չենք տեսնում, այլ ընդունում ենք աւետարան, որպէս վերին աստիճանի բարոյական գիրք, որպէս մարդկութեան բարոյականութեան հիմնա-

Երևան. Հոկտ. 8 ***

և կոչվելով յօգուտ այդ առարկաների կա-
րօւ գաղթականներին և Ք. Արծրունի բա-
րեհանգի տալ Կոմիտէին իր քարվանսարայի
խանութները մինչ անկարծ, որպէս ժամա-
նակաւոր պահեստ վերէն յիշված նուիրա-
տու թիւները ժողովելու համար:

Սեպտեմբերի 29-ին Մանածոգողի ջան-
քերով տեղի ունեցաւ Ալեքսանդրեան այ-
գիւղ ժողովըղական հրօսանքը, որից ստա-
ցած արդիւնքը նշանակված է Մանածոգողի
հիմնական գրամատուցութիւն համար:

Նախագահ Ա. Անանով
Քարտուղար Գ. Արծրունի

ՆԱՄՍԱԿ ԹԷԼԱՒԻՑ

Հոկտ. 7-ին

Օգոստոսի 14-ին արք. Աստուածածնի վերա-
փոխման տօնին գտնվելով թէլաւի նորաշէն
եկեղեցում, եւ իմ եղբոր հետ չըլելով հանդի-
սականների մէջ, հաւաքեցի 48 բուրլ գումարը
յօգուտ գաղթական հայերի: Այս փողից 30 բ.
միւս օրը իմ եղբոր ձեռքով յանձնեցի տեղի
գործակատար հօրը, որ նա չուտ հասցնէր ուր
որ հարկէ: Միայն ինչպէս լսում եմ, գործա-
կատար-հայրը նոր է ուղարկել այն 30 բուրլ,
ուրեմն դեռ ստացած չէք լինի, և մնացածն էլ
պահանջում էր որպէս զի միասին ուղարկէ:

Այժմ, պ. խմբագիր, ուղարկելով ձեզ մնացած
18 բուրլ խնդրում եմ, որ հրատարակէք բոլոր
նուիրատուների ազգանունների ցուցակը, Ահա
այդ ազգանունները և իւրաքանչիւրի նուիրած
գումարի չափը: Բեզլար խիթաբեանց 5 բուրլ,
Եփրեմ Թաթոսեանց 3 բ., Կէկէլ Թաթոսեանց
2 բ., Մաշիկո Նալալեանց 2 բ., Եսգոր Մկր-
տումեանց և նրա կինը 2 բ., Մարթա Նարա-
լեանց 1 բ., Շուշան Ախալքալաբեանց 1 բ.,
Մելանիա Ասաբեկեանց 1 բ., Եփեմիա Տէր-
Ասրգեսեանց 1 բ., Բաղդ. Թաթոսեանց 1 բ.,
Աննա Ղուկիշեանց 1 բ., Մարիկո Տէր-Ասր-
գեսեանց 1 բ., Մաշո Կաթեանց 1 բ., Մանանա
Կոստեանց 1 բ., Կէկէլ Բէժեանց 1 բ., Գը-
րիգոր Սօրոյեանց 1 բ., Մայիա Մկրտումեանց
1 բ., Մէլքո Սուքիասեանց 1 բ., Եսգոր Տէր-
Ասրգեսեանց 1 բ., Գրիգոր Սիմօնեանց 1 բ.,
Լիզա Մարգարեանց 1 բ., Բարբառէ Մարգա-
րեանց 1 բ., Արէլ Նրալեանց 1 բ., Նատո Նրա-
լեանց 1 բ., Նատո Ասլանեանց 1 բ., Զաքար
Սօրոյեանց 1 բ., Մաշո Սոկանեանց 1 բ.,
Աննա Արապեանց 1 բ., Կատո Զօրաբեանց 1
բ., Մաշո Գարուբեանց 1 բ., Օլգա Քոլլո-
զեանց 1 բ., Մելանիա Մարգարեանց 40 կօպէկ,
Թէկէլ Մկրտումեանց 20 կ., Աննա Մկրտո-
մեանց 60 կ., Կատին Քոլլոզեանց 20 կ., Մի-
քայէլ Մարգարեանց 50 կ., Մէլքո Ասատու-
րեանց 50 կ., Ալէքսի Ալէքսեանց 20 կ., Սիդ-
նիա Կաթեանց 20 կ., Թէկէլ Գովհանիսեանց
40 կ., Սօֆիա Աւետիքեանց 20 կ., Մայիա
Արուբեանց 30 կ., Կատարինէ Բէգիշեանց
20 կ., Մարիամ Ասլանեանց 40 կ., Կատարինէ
Զաչուդեանց 20 կ., Կատո Ալէքսեանց 20 կ.,
Թէքրո Մարգարեանց 60 կ., Նատո Մարգա-
րեանց 20 կ., Քէթիկ Գեօրեանց 20 կ., Սօ-
փիո Շինգարեանց 40 կ., Մակա Գարուբե-
անց 50 կ., Նատո խեղօյեանց 50 կ., Մաշո
Նարիմանեանց 50 կ., Թէքրո Բէգիշեանց
40 կօպէկ.—Ընդամենը 48 բուրլ:

Օր. Շուշանիկ Սուքիասեանց

ՆԱՄՍԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Հոկտեմբերի 8-ին

Զեր պատական լրագրի № 70 մէջ ինձ ան-
ժանօթ թէ բարեկամներից մինը, պ. Մ. Կ.
քննադատելով «Մշակի» մէջ տպված Գ. Տ. Գ.
պարոնի նամակը, վերջում առաջարկում է զա-
նազան, իրաւ, չափազանց կարեւոր հարցեր, հրա-
ւիրելով նաև ինձ պատասխանել դրանց մի
առ մի:

Առաջ քան այդ, յարգելի տէր, նախ դուք, որ
չէք դատում ձեր պատական լրագիրը նուիրել
նաև մեր (թշնամիներով, չընդգտնված) ուսում-
նարանի օգտին և ապա ձեր ժողովրդասէր
թղթակիցը, պ. Մ. Կ., որ նկատելով մեր ազգի

գործերը կամեցել է լուծումն ստանալ իր հար-
ցերի համար, — բարեհաճեցէք ընդունել որպէս
իմ, նոյնպէս և ուսումնարանի խորին նորհակա-
լութիւնը:

Կորանից յետոյ ես տալիս եմ ինձ վերա-
բերելի հարցերի պատասխանները: Հիմարիտ
է, որ 1877 թ. փետրվարի 28-ից մեծապատիւ
հոգաբարձուների առաջարկութեամբ ընդունել
եմ Շուշո Հայոց Հոգեւոր Կարգի տեսչական
պաշտօնը: Մինչև այդ օրը թէ թեմական և թէ
օրինորդաց դպրոցի տեսչական պաշտօնը Արիս-
տակէս վարդապետի կարգադրութեամբ յանձն-
ված է եղել արժանապատիւ Սիմէոն քահանային:
Թեմական դպրոցը գտնվում էր այնտեղ, ուր է
և այժմ, իսկ օրինորդաց դպրոցը, որ առաջ, Կօն-
ստոյրիայի և դպրոցի արտաքինացիներով չընա-
պատված, դեռեղովում էր երկու փոքրիկ, խոնավ
և անտոտ սենեակում, այժմ գտնվում է թեմա-
կան դպրոցի ընդարձակ դահլիճներում, առաջին
և երկրորդ դասարանների բաժանված:

Մարտի 1-ին օրինորդաց դպրոցը ունէր միայն
14 ձրիթոշակ աշակերտուհի:—Յուլիսի 10-ին,
մինչև թիֆլիս գալու ուսուցիչներ և վարժուհի
ընտրելու համար, 44 աշակերտուհի, իսկ այժմ
65-ից աւելի և համարեա բոլորը թոշակաւոր:—
Ես կարծում եմ ընթերցողը կը դարմանայ թէ
ինչու աշակերտուհիք սկզբում թէև ձրիթոշակ,
բայց 14 հոգի էին, իսկ վերջում, իմ գալուց յետոյ,
թոշակաւորը և այն 65-ից աւելի:—Առ այժմ խո-
հեմութիւնը չէ թոշակաւորում պարզել ինձ դորա
պատճառը և առել նաև այն, թէ չառ ծնողներ
այսօր պատրաստ են ոչ միայն տարեկան ութ
բուրլ տալ, այլ և աւելի:—Օրինորդաց դպրոցի
ուսուցիչ և վարժուհի մինչ իմ գալը եղել են,
իրաւ, ձեր պ. թղթակցի նկարագրած, իսկ այժմ
է օրինորդ Նիկաբեթ Ալիխանեան:

Արիստակէս վարդապետի մասին չառելով որ
նա անյարմար անձն է իր պաշտօնին համար,
խոստովանում եմ և ես չառեմ ինձ, որ նա
պարագայում է աշխատելով չղորդ թղթակցիցներ
գտնել սորա ու նորա մէջ իր ոչ միայն չա-
րած, այլ և մտքով անգամ չանցկացրած մեծ
մեծ (?) գործերի համար:—Մի մարդ, որի հա-
մար չառ արդարացի է «Մշակի», առաջնորդող
մի յօդուածում արած նկատողութիւնը և որ
պարագայում է լոկ մարդու արածը պախարակե-
լով,—այդպիսի միւր ժամանակ էլ չէր ունե-
նայ մտածելու որ և իցէ ազգային գործի հո-
գատարութեան համար:—Այս նկատողութիւնը
աւելի կը հաստատվէր, եթէ յայտնի լինէր ամե-
նին որ այդպիսի պարոնը իր անձի արժանա-
ւորութիւնը ոչ թէ գտնում է ուսումնարանների
չինութեան և բարեկարգութեան մէջ, այլ չընդ
ապրելով, դրաստութիւն անելով, վերջապէս
գանազան ճանապարհներով չառելի յինածը
քանդելով:...

Պ. Մ. Կ. հարց է անում օրինորդաց դպրոցի
խալի-խալիչաների, մնացած ասեղնագործու-
թեանց և վիճակարկութեանց հրքան ժողովված,
ուր եղող գրամների համար:—Ես չեմ կամենում
վշտացնել Արիստակէս վարդապետին, այլ որ-
պէս խնամակալ դպրոցի, խնդրում եմ նորանցից
քաղաքավարութեամբ բերի, յետ տայ այդ բո-
լորը:—Առանց այդ էլ դպրոցը խեղճ դրութեան
մէջ է, քիչ կը լինի նորա ապագան, եթէ ան-
ղթաբար յափշտակեն ոչ միայն նորա իրե-
ղէնները, այլ և 300 բուրլից աւելի դրամա-
զուրը:...

Իսկ ինչ վերաբերում է պ. Մ. Կ. այն հարցին
թէ ինչ օրի էր դպրոցը սկզբում և ինչ դրու-
թեան մէջ է այսօր—այդ հարցի պատասխանը
եւս առայժմ թողնում եմ գործին հանգամանքո-
րէն տեղեակ բարեխիղճ անձանց, որի մասին
արդէն պատրաստվում է «Մշակի» բաժանորդ-
ներին, ձրի գրվելու մի փոքրիկ բերօյի:

Նամակս վերջացնելով, մեծապատիւ տէր,
խնդրում եմ տեղ չնորձէք սորան «Մշակի» էջե-
րում, որով մեծ բարութիւն արած կը լինէր մի
հատարակական շնտութեան, որը գրված է իր
կենսական օգուտներից:...

Վասակ Պապաջանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 12-ին մենք առիթ ունեցանք
տեսնել, ինչպէս եկան թիֆլիս և իջելին «Օն-
դոն» հիւրանոցում Ալալի ճակատամարտի ժա-
մանակ դերի բռնած թիւրք փաշաները: Ընդա-
մենը հիշող թէ վեց կառք էին, որոնց մէջ նստած
էին երկու երկու, կամ երեք երեք մարդ: Փա-
շաները ունէին իրանց հետ իրանց աղիւտանա-

ներին և ծառաներին: Աղիւտաններից ոմանք
թիւրքերի նման չէին, այլ աւելի եւրոպական
երեսներ ունէին:

Թիֆլիսի Մանածոգողը գաղթականների
օգնութեան տպեց իր գործունէութեան և ելու-
մուտը հաշիւը «Тифл. Вѣстн.» լրագրում: Եկած
այն օրից երբ հիմնվեցաւ այդ մանածոգողը
մինչև հոկտեմբեր ամսի 1-ը, ընդհանուր մուտքը
եղել է 20,900 բուրլ և 64 կօպէկ, ծախսը եղել
է 5925 բ. 41 կօպէկ, ուրեմն մնում է հոկ-
տեմբերի 1-ին թիֆլիսի Առեւտրական բանկի
ընթացող հաշոււ և Մանածոգողի կառայում
ընդամենը 14,975 բ. 23 կօպ.: Մենք էլ տպում
ենք մեր լրագրի ներկայ համարում Մանածո-
ղի գործունէութեան հաշիւը: Իսկ ելումուտը
հաշիւը կը տպենք միւս անգամ:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեցաւ յօդուա
գաղթականների փոխութիւն մէջ ընտելվող պ. կա-
րապետ Պօպօվեանցից 25 բուրլ:

Մենք մեր ընթերցողներին յայտնեցինք ար-
դէն որ պ. Ն. Նիկոլաւ է ին կառավարութե-
նից թող տրվեցաւ հրատարակել թիֆլիսի
մի նոր ուսուցիչ ամենօրեայ լրագիր: Լրագրի
անունը «Обзор» (Տեսութիւն) կը լինի: Պօ-
քրամայի հետ մենք դեռ ևս ծանօթ չենք: Յան-
կանում ենք պարոնին աղոթութիւն իր ձեռնար-
կութեան մէջ, բայց չենք կարծում որ թիֆլիսի
պէս քաղաքում երեք հատ ուսու քաղաքական
թերթեր կարող են աջակցել: Մենք կարծում
ենք որ հազիւ թէ մեր քաղաքում և երկրում
երեք ուսուց լրագրի համար բաւական բաժա-
նորդ կը գտնվի:

Մեզ խնդրում են յայտնել որ Ա. Կ. Կ. Կ. Կ.
«Մարիամեան» հայոց օրինորդական դպրոցը թիֆ-
լիսի թիֆլիսի աշակերտուհիների համար,
բացվելու է ներկայ 1877 թ. 1-ի նոյեմբեր ամսի
սկզբներում, Կարգի հիմնող Գովհանիսեան Առե-
վանեան Անանովի հաշուով կընդունվեն անվարձ
50 աշակերտուհիներ հայուհիներից, զիւսուորա-
պէս որբերից: Ընդունվում են նոյնպէս և թոշա-
կաւոր աշակերտուհիներ, ամսական 2 բուրլ վը-
ճարով, աւելացնելով այդ վճարի վրա 3 բուրլ
տարեկան, դպրոցի ուսումնական պիտոյքների
համար, Ներկայ թիւին բացվելու են երկու պատ-
րաստական դասատուներ և առաջին դասատուներ:
Իրանց երեխաներին դպրոցը տալու և մանրա-
մասն պայմաններին մասին տեղեկութիւններ
ստանալու ցանկացողները կարող են դիմել դըպ-
րոցի տեսուչ Գ. Չիգիւրեանին, նոյն իսկ
դպրոցի շինութեան մէջ, Բէքուտովսկայա փողո-
ցում, ամեն օր առաւօտեան ժամը 11-ից մինչև
1 ժամ կէսօրից յետոյ: Անթոշակ աշակերտու-
հիների ընդունելութեան ինչպիսիք կարելի է
ներկայացնել նարկայ հոկտեմբեր ամսի 25-ից
ոչ ուշ:

«Вѣстн. Тифл.» լրագրի հարդրում է որ 18-ին
նոյեմբերի պիտի սկսվի Ս. Պետրոֆովիչի
սենատի մէջ մի ընդարձակ քաղաքական գործի
քննութիւնը: Կատարանի առջև պիտի ներկայա-
նան 196 մեղադրված երեւոտարդներ (մարդիկ
և կանայք): Այդ կը լինի թէ Ռուսաստանում և
թէ գուցէ ամբողջ Եւրոպայում մինչև այժմ եղած
բոլոր քաղաքական գործերը ամենաընդար-
ձակը: Երեւոտարդները մեղադրվում են յեղա-
փոխական պրօպագանդայի մէջ: Ս. Պետեր-
բուրգի և Մոսկվայի ամենաշայտնի ազգութա-
ններ յանձն առան երեւոտարդութեան պաշտ-
պանութիւնը: Ինքն գործը բաղկացած է 200
հատորներից, իսկ մեղադրական ակտը, որի հե-
ղինակն է սենատի քրէական կատարողական
բաժանմունքի օբլ-պրօկուրոր, պ. Դեկտուպիկ:
Բաղկացած է 300 տպագրական երեսներից:

Մենք առիթ ունեցանք ծանօթանալ թիֆ-
լիսի եկած թիւրք գերեզներին մի քանիսների հետ:
Նրանց մէջ կան երեւոտարդ օֆիցիւրներ, որոնք
եկած են փաշաների հետ, որպէս աղիւտանա-
ներ: Նրանցից մի քանիսներ, թէև իրանց թիւրք
են ասում, խօսում են շատ լաւ հայերէն լե-
զուով: Նրանք շատ գովում են Լօսիւն-Մէլիքով
և Լազարով գեներալներին: Օֆիցիւրներից ոմանք
բոլորովին թիւրք երես չունեն, այլ աւելի նը-
ման են եւրօպայիկներին, բայց կան և այնպի-
սիներ, մասնաւոր փաշաների մէջ, որոնք բուն
բուրդ տիպ են ներկայումս: Այն երեւոտարդ
օֆիցիւրը, որի հետ մենք ծանօթացանք և որ
պատական կերպով հայերէն է խօսում, Կիար-

րէկիր քաղաքից է և հաստատցնում է որ այն-
տեղ բոլոր թիւրքերը հայերէն են խօսում:

Այս օրերս թեմական առաջնորդ Գ. արքիէ
արքեպիսկոպոսը հասաւ թիֆլիս, վերադառ-
նալով Ս. Էջմիածնից:

Հոկտեմբերի 22-ից Ս. Պետրոֆովիչի օտա-
ցած ուսուց փողերի կուրսի մասին հեռագիրը
այս է: Ռուսաց բուրլը փոխանակված 1 օն-
դ օնի վրա արժէ 22,81 պէնս, փարիզի վրա
237 սանտիմ: Ներքին 500 առաջին փոխառու-
թեան տոմսակը արժէ 209 բ. 50 կ., երկրորդ
փոխառութեան 504 բ., Պետական բանկի 500
տոմսակը առաջին չըջանի արժէ 94 բ. 62 կօպ.,
երկրորդ չըջանի 94 բ. 25 կ., 500 բնաւ
արժէ 99 բ. 75 կօպ., վերջապէս պրօկուրպէ-
րիակը գինը 8 բուրլ և 87 կօպէկ է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԲԱՆՍԻԱ

Առաջին անգամ չէ որ ամբողջ աշխարհը
լարված ուշադրութեամբ հետևում է Ֆրան-
սիայի քաղաքական ընտրութիւններին: Բայց
վերջին ժամանակները եւրօպան վերաբեր-
վում է դէպի Ֆրանսիա բոլորովին այլ կեր-
պով, քան թէ վերաբերվում էր մինչև այժմ
Այժմ, բացի կղերականներից, ամբողջ եւրօ-
պայում չէք գտնի ոչ մի տէրութիւն, ոչ
մի կուսակցութիւն, որքան և յետագէմ լե-
նէր նա, որ ցանկանար յաղթող տեսնել
Մակ-Մաճօնի կառավարութիւնը: Առաջվայ
ժամանակներում այս կամ այն կուսակցու-
թիւն, այս կամ այն տէրութիւն ցանկանում
էին աջդուրթին Ֆրանսիայի այս կամ այն
ուղղութեան: Դրսի երկիրների կուսակցու-
թիւնները իրանց յոյսերը դնում էին միշտ
Ֆրանսիական կուսակցութիւնների վրա: Եւր-
օրինակ, Ֆրանսիայում միապետական կու-
սակցութիւնը յաղթող էր հանդիսանում,
միւս երկիրների միապետական կուսակցու-
թիւնները ուրախանում էին, իրանց աւելի
զօրեղ էին զգում:... Բայց այժմ, բացի կղե-
րականներից, ոչ ոք չէ համարում օրէն-
նաներին, բնապարտեաններին, կամ օրի-
նականներին: Մինչև անգամ ամենայնապէս
կուսակցութիւնները ոչ թէ միայն անտար-
բեր են դէպի Մակ-Մաճօնի կուսակցութեան
ձգտումները, բայց մինչև անգամ ցանկանում
են հանրապետականների յաղթութիւնը: Մի
քանիսները համարում են հանրապետու-
թեանը, որովհետեւ գիտեն թէ միայն հան-
րապետութեան միջոցով կը հաստատվի խա-
ղալութիւնը Ֆրանսիայում, միւսները համա-
կրում են հանրապետականներին, գիտենալով
որ Ֆրանսիայի ծաղկած գրութիւնը կախված
է պարլամենտական և ազատ կառավարու-
թեան նորա մէջ հաստատվելուց և այլն:...

Վերջին ընտրութիւնները ապացուցին մեզ
որ Ֆրանսիական ազգը քաղաքականապէս
հասունացած է, որ Մակ-Մաճօնի կառավա-
րութեանց գործը դրած բոլոր խնդիրները,
ընտրութիւնների վրա նորա գործը դրած
ճնշումը ոչինչ չը կարողացաւ անել և հան-
րապետական կուսակցութիւնը այնու ամե-
նայնիս յաղթող հանդիսացաւ:

Ֆրանսիական պատգամաւորների ժողովը
բաղկացած է 534 պատգամաւորներից: Ար-
ձակված ազգային ժողովի մէջ կային 363
հանրապետականներ, որոնք թշնամական կեր-
պով էին վերաբերվում դէպի Մակ-Մաճօնի
վերջին միապետութիւնը: Մակ-Մաճօն ար-
ձակեց պատգամաւորների ժողովը, գործը դրեց
ամեն տեսակ միջոցներ, ընտրութիւնների վրա
ճնշումներ գործեց, խնդիրներ արաւ, օր-
պառնաց, — որպէս զի հետեւեալ ընտրութիւն-
ներում 363 հանրապետականները չընտրվին:
Այդ ժամանակ 363 հանրապետականներից
եօթ հօգի վախճանվեցան, իսկ վեց հօգի
իրանք հրաժարվեցան ընտրութեան առա-

Ջարկութիւնները ընդունելուց, ուրեմն հան-
րապետականների թիւը ինչպէս մինչեւ 350
հոգի: Ահա այդ թիւը պէտք է ընտրել
Ֆրանսիական ազգը, որ ապացուցաներ թէ
գիտէ բոլորեւ ճշման և բռնաւորութեան
դէմ: Եւ ճշմարիտ այդ 350 հոգուց 330
հոգի արդէն կարող են ընտրված համարվել:
Մնում է միայն 20 հոգի, որոնք պակաս են
հանրապետական պատգամաւորների թւին:
Ուրեմն այսքան ճշման, անխառնութեան, հա-
ւաքանք, խաղաղութեան գործ դնելուց յետոյ,
Մակ-Մաճոնի կառավարութիւնը հասաւ այդ
տեսակ չնչին հետեւանքին՝ պատգամաւորների
ժողովում 20 տեղ աւելի ծառայել իր կու-
սակցութեան ներկայացուցիչների համար,
քան թէ պատգամաւորների անցեալ ժողո-
վում: Դորա համար չափեր այսքան աղմուկ
հանել... Իսկ մինիստրութիւնը սպասում էր
ընտրութիւնների բոլորովին այլ հետեւանք-
ների: Դեռ քանի մի որ ընտրութիւններից
առաջ ներքին գործերի մինիստրը տարածեց
բոլոր պրէֆէկտների (նահանգապետների)
մօտ մի շրջաբերական, որի մէջ հաստա-
տում էր, որ Մակ-Մաճոնի կուսակցութեան
պատգամաւորների ընտրութիւնը ապահո-
ված է արդէն աւելի քան 300 ընտրողական
վեճակներում...:

Բայց հանրապետականները դարձեալ յաղ-
թող հանդիսացան և պատգամաւորների ժո-
ղովի մէջ նորա կուսակցան 126 ձայների ահա-
գին բազմութիւնը: Ուրեմն յետադէմները,
որոնք կառավարում են այժմեան ֆրանսիա,
ուզում էին ապացուցանել իրանց ոյժը, բայց
ապացուցին միայն իրանց բարոյական թու-
լութիւնը:

ԳԵՐՄԱՆԻԱ

Մենք արդէն յայտնեցինք մեր ընթերցող-
ներին, որ Գերմանիայի ներքին գործերի մի-
նիստը, գրաֆ Ելլենբուրգը ներկայացրեց Վիլ-
հելմ կայսրին իր հրաժարականը, բայց այժմ
«Journal de St. Petersburg» լրագրողը տեղե-
կութիւն է ստացել Բերլինից որ Վիլհելմ
կայսրը չէ ընդունել նրա հրաժարականը,
բայց համաձայնվել է տալ նրան երկար ար-
ձակուրդ իր պաշտօնից: «Nordd. Allg.
Zeitung» լրագրողը հաստատում է այդ լուրը
և աւելցնում է որ գրաֆ Ելլենբուրգին
տուած արձակուրդը կը տևի մօտ չորս ամիս:
Նրա բացակայութեան ժամանակ ներքին գոր-

ծերի մինիստրի պաշտօնը ժամանակաւորա-
պէս կը վարէ երկրագործութեան մինիստր
Ֆրիդրիխսը:

ՍԵՐԲԻԱ

Սերբիայի նախկին մինիստր Գրուիչը նորից
մտաւ մինիստրութեան մէջ: Որովհետեւ յայ-
տնի է թէ Գրուիչը միշտ պատերազմի դէմ
էր, այդ պատճառով նրա մտնելը մինիստրու-
թեան մէջ համարվում է մի նշան որ Սեր-
բիան ցանկանում է յետ գցել անորոշ ժա-
մանակով իր մասնակցութիւնը պատերազմի
մէջ:

ԱՌՍՏՐՈ-ՈՒՆԳԱՐԻԱ

Վիեննայում, ինչպէս հաղորդում են լրա-
գրիչները, աղաւաղաւ կուսակցութիւնը դի-
տաւորութիւն ունի մի փառաւոր պարլամեն-
տական ծառ տալ աւստրիական մայրաքաղաքը
այս օրերն եկած իտալական պատգամաւոր-
ների ժողովը: Վրիսպի նախագահին: Վրիսպի
ղիտաւորութիւն ունի այցելել Ունգարիայի
Պէշտ մայրաքաղաքը, որտեղ կը լինի երեւի
նորա տեսակցութիւնը աւստրո-ունգարական
արտաքին գործերի, Կոմս Անդրաշի մինիստրի
հետ: «Միջազգային հեռագրական ընկերու-
թիւնը» հաղորդում է Վիեննայից հոկտեմ-
բերի 23-ից (11-ից) որ աւստրո-ունգարա-
կան ֆինանսների մինիստր ներկայացրեց
պատգամաւորների ժողովին 1878 թւի հա-
մար պետական բիւջետի: Ծախսերը հաշւած
են անցեալ տարուայ 91/2 միլիոն պակաս,
իսկ մուտքը 8 միլիոն աւելի քան թէ 1877
թւին: Ուրեմն զեֆիցիտը փոխանակ 378/01
միլիոն լինելու, կը լինի միայն 202/10 միլիոն:
Մինիստրը յոյս ունի 1880 թւին բոլորովին
հաւասարեցնել ծախսը և մուտքը և վերա-
կանգնեցնել բիւջետի հաւասարակշռու-
թիւնը: Վիեննայի «Presse» լրագրողը ասում
է թէ լուր կայ իբր թէ չէ խաւան երկու
կուսակցութիւնները՝ հին և նոր չէկերը,
զիտաւորութիւն ունեն թողնելով իրանց
բռնած կրօնական ընդդիմադրութեան
դիրքը, միասնա և մասն ի յետադիմ: Եթէ
հաւատանք «Montags-Review» շաբաթա-
թերթին, բոլոր լուրերը իբր թէ Աւստրիան
կամենում է միջնորդի դերը խաղալ Ռուսա-
տանի և Ռուսիայի մէջ, և իբր թէ գրաֆ
Բէյտոյ այդ ուղղութեամբ աշխատում է Ան-
գլիայում, իսկ Կ. Պոլսի աւստրիական դես-

պան գրաֆ Զիլչի Կ. Պոլսում այդ մասին ա-
ռաջարկութիւններ է անում, — բոլորովին
սուտ են: Բայց այդ տեսակ լուրերի տարա-
ծելը կարելի է բացատրել միայն դորանով,
որ սուլթան Աբդուլ-Համիդը քանի մի ան-
գամ յայտնել է գրաֆ Զիլչին իր խաղաղա-

կան տրամադրութիւնը: Գուցէ Անգլիան այս
բայէիս ճշմարիտ աշխատում է խաղաղական
միջամտութեան համար, մանաւանդ որ ուռ-
սաց զօրքի նշանաւորում արած վերջին
յաղթութիւնից յետոյ, երեւի կրկին կը դարձ-
նեն անգլիական ինտերէսները:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԲԱՐՈՒՏՅԵՎ Ի ԿԱՆՏՈՐԱ

ԹԻՖԼԻՍՈՒՄ Լժպանակի փողոցում, Կլիաոկովսկու տուն,
Մուգեւորի հանդէպ:

1 ԱՌՆՈՒՄ Ե Է ԾԱԽՈՒՄ Ե 5% բանկային տանող (վերգրիչի)
տոմսակները:

2. ԾԱԽՈՒՄ Ե 5% տանող տոմսակները պայմանաւորաբար յետա-
ձգութեամբ 12 մինչեւ 24 ամսով և աւելի, 20 րուրի բէհով:

3. ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե դրամական դնումներ՝ տարեկան և կես տա-
րեկան պայմանաւորաբար և մինչև պահանջ (պրոցենտները կանոնա-
րայի հետ համաձայնութեամբ):

4. ՓՈՒՅ Ե ՏԱԼԻՍ դումարներ տոկոսաբեր թղթերի գրաւակա-
նով 6 և 10% բօրային կուրսից պակաս. տանող տոմսակների վա-
ստի և տրվում գումարը մինչև 180 րուրը և վերցվում է 12% տա-
րեկան ծախսերով: Վ ճարքը թղթ է տրվում մաս մաս:

5. ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ուրիշ բանկերից տոմսակների կրկին գրաւ-
դնելը, վճարում է մնացած փողերը և առնում է տոմսակներ ուրիշ
բանկերի մէջ գրաւ գրած պարտաւորութիւններով:

6. ԱՊԱՀՈՎԱՅՆՈՒՄ Ե տանող տոմսակներ հանդէմն տիրաւոր:

7. Տոկոսաբեր թղթերի գրաւականով ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆԸ, սե-
փական գարանտիայով, կրկնապատկելով սեփականատէրերի եկամուտը:

8. ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե պահելու համար բոլոր տոկոսաբեր թղթ-
թերը մինչև պահանջ:

Բոլոր տեղեկութիւնները այն ամենի վրա, որ վերաբերվում է
բանկային օպերացիաների, թղթերի գին, տարած գումարների և
տիրաւորների մասին, կարելի է անվարձ ստանալ կանտոսայում:

14—21 (1)

«ԱՆՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ» III հատորը պատրաստելու համար ժողովում ենք մեր կենսից ան-
տուած անկեղծասեր Մեզ անկեղծասեր ուղարկողների ազգանունները կը տպուին գրքի վեր-
ջում և նոյնից իւրաքանչիւր կը ստանայ մի օրինակ:

Մեր հասցէն. — ВЪ Симферополь (Крымъ) въ армянское училище, учителю Ованеся НА-
ЗАРΙΑНЦЪ. Ծ. ՆԱԶԱՐԵԱՆՅ 2—3

ՀՈԿՏՈՒԲԵՐԻ 17.		Տ. Ե. Վ. Ե. Կ. Ա. Յ. Ո. Յ.		ԹԻՖԼԻՍ. 1877.							
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ		Բ.	Կ.	ՀԵՌԱԳԻՐ		ՓՈԹԻ—ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ- ԹՈՒՂԻ		ՓՈՒՅ		«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԻՆՆԵՐ	
(Հոկտեմբերի 17-ին)				Բ.	Կ.						
Ոսկին (պոլուսկիա)	8	60		Կովկասի և Ան-		Թիֆլիսից մինչև Փոթի	1) Ամեն տեսակ թէ նա-	գուր տրակտից՝ երեք-			
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1550	—		դրովկասի քա-		(ճանապարհորդների գնացքը) 9	մաներ, թէ լրագրիչներ	լրակների արակտից եր-			
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1220	—	1	ղաքները		ժամին 21 րոպէս առաւօտեան:	Ռուսաստան և ար-	կուսակցութիւն, հինգշաբթի և			
Վերջինի 50/100 առաջի փո-			2	Ռուսաստան		Մինչև Միխայիլով (խառն	տասնահամար ուղարկե-	շաբթի: Փոթի-Թիֆլի-			
խառնութեան տու. 100 »	206	—	3	Աւստրիա		գնացքը) երկուշաբթի 5 ժամ. 18	լու, ընդունվում են ամեն	լիսեան երկաթուղուց			
Երկրորդ 50% վերջինի »	205	—	4	Անգլիա		Փոթի 12 (բացի կիրակի	օր, առաւօտեան 8 ժամից	ամեն օր: Նույն օր արա-			
Մարտի կուրսը 238 ֆ.	100	—	2	Ֆրանսիա	88	մինչև 12 (բացի կիրակի	օր, առաւօտեան 8 ժամից	տից՝ չորեքշաբթի և կի-			
1 օնցի կուրսը Օդեսայի			3		75	րոպէս	րակտից՝ երեքշաբթի և չա-	բաթ:			
միս.	9	85									
Վենայի կուրսը 136 գլ.	100	—		ԱՆԿԻՐՎՈՂԿԱՍԵԱՆ ՄԱՆ-		Թիֆլիսից 9. 21	2) Բացի ամեն տեսակ թէ նա-	գուր տրակտից՝ երեք-			
Գաւրեթի բարաթը.	5	—		ԿԱՐԱՐԱՅԱԿԱՆ ԳՊՐՈՑ		Գորի 11. 58	մաներ, թէ լրագրիչներ	լրակների արակտից եր-			
Աւստրիական բանկի աւ-				(Վերջինի վրա № 38)		Միխայիլով. 1. 29	Ռուսաստան և ար-	կուսակցութիւն, հինգշաբթի և			
ցիան 200 մ.	260	—				Բիւր 6. 47	տասնահամար ուղարկե-	շաբթի: Փոթի-Թիֆլի-			
Փոթի թիֆլիսեան երկա-						Փոթի 9. 40	լու, ընդունվում են ամեն	լիսեան երկաթուղուց			
թուղու ակցիան 125 մ.	125	—					օր, առաւօտեան 8 ժամից	ամեն օր: Նույն օր արա-			
Շաբաթը բոցկուր.	8	50					րակտից՝ երեքշաբթի և չա-	բաթ:			
» միւս տեսակը.	8	30									
» շաբաթաւոր.	7	—									
» տարադր.	7	20									
» մաքուր վճարած	10	60									
Բաժնակը երկանու Ա-											
մերիկայի սերմից.	8	50									
Միւս տեսակը հին սերմից.	7	50									
Բուրգը թուլի.	7	—									
» թարաքամի.	3	50									
Ալիւր Երազալու.	2	—									
» երկանի.	—	—									
Գարին.	1	20									
Միւր բնածարսի (сгар.)	14	—									
Մետաքս Նուրկայ.	140	—									
Կախեթուր.	50	—									
Կոկոսը Նուրկայ (բոմ.)	26	—									
Ֆրիդուր (լաւը) Աղու-											
րեաց.	50	—									
Կոֆէն մոկոյի.	27	—									
» լիւանի.	22	—									
» մարտիկոյինը	20	—									